

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՒՆ

Registered at the General Post-Office for transmission abroad.

ԵՐԿՐԱԳՈՒՄԷՆ

ԼՐԱԳԻՐ ՄԱՆՁԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԵՒ ԱՌԵՒՏՔԱԿԱՆ.

Հասցեատերական, հասցեատերական է համարվում
Երկրագործական է Երկրագործական:

— Նախագիտ, յոգանալ, զիջել է համարվում (համար է ծա-
րանգան է համարվում) — Նախագիտ, յոգանալ, զիջել է համարվում

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz,
151, Rumbold Street, Manchester, (Angleterre.)



Տեղի վրա համարվում է համարվում, — Երկրագործական
Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.

Ստորագրություններն են Կոստանդնուպոլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարյանի սենեակին ի Ղալաթա. — Իզմիր Մարկոսյանի ջանքեր
Աղայի սենեակին. — Հոյնի Յովհաննէս Աղայ Բիւրքանի սենեակին. — Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակին
— Աղեքսանդրի (Եգիպտոս) Տէր Գաւաթեանի Ղազարոս Աղայի սենեակին. — Կալիթա Սրբակոն Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Խաչիւրեանի
և Աղեքսանի սենեակին. — Բաթումի Պ. Մանուկ Արդանանդի սենեակին. — Լոնդոն Աղայ Մարտիրոսի սենեակին. — Փարիս Աղայ Պարտի
ճեպարի սենեակին. — Երկրագործական է համարվում է համարվում, է 25 է.
Երկրագործական է համարվում է համարվում, է 25 է.

Բաժանման արժեքներ. — Դանուբիան իշխանութիւն
ներ. — Ռուսիոյ. — Մեծն Բրիտանիոյ. — Ֆրանսիոյ. — Աւստրիոյ.
— Դանիոյ. — Իտալիոյ. — Պորտուգալիոյ. — Թուրքիոյ. — Եգիպտոսի.
— Զանաբ. — Երկրագործական է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.
— Այսինքն է համարվում է համարվում, է 25 է.

Թեան սկզբանց և ինչ մարդավայել իմաստով
Թեան մէջ գէտ, ըստ սրտաշանի չէ յառաջեր:
Ահաւարկ շարժական ընդերքով ընդանդա-
կութիւնն: Այստեղիւ և Պրոսիոյ և Լիւքսեմբուրգի
սպիւ լրագիրներն: Այսպիսի առաջարկեալ իտր-
հրդակցութիւնն ընդունիլ կհաճին հետեւեալ թիւ-
թիւներով: Խալիս զինադադար ցամաքի և ծովու
վերայ: Երկրորդ՝ Կոստոլ նշխարութիւններն ի-
րենց արդի ունեցած տեղերն կենան. երրորդ՝
Դանիարդն դարձանէ Գերմանացոյ բանաժ նա-
ւերն: չորրորդ՝ Շեղծիկի գերմանական մասն
Հոլանդիին կցել հաստատուալէս և այս երկու
դրութիւններս Դանիարդի արքային հետ կապել
անձնական միադարձեալ միայն. այսինքն յի-
շտալ գրաւութիւններն իրենց անձնիշխանն օրէնք և
զատ կառավարութիւնն ունենալով, միայն Դան-
իարդի արքան իրենց գլուխ ճանաչեն և
հետեւաբար՝ անգամ գերմանական գաղնակցու-
թեան:

Ժեմ ար կախն մշտնջենաւորելու է Ֆրանցիին
Թոններուն մէջ. և հասարակագետական Ա-
մերիկան վերապին վայրենութեան դառնալու է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ և Դանիարդի կոխն դադրեցնելու
համար ըլլալի խորհրդակցութեան լուրերն առ-
րաձայն են այս շարժում: Ոմանք Ավստրիոյ և
Պրուսիոյ մեղադրելով, այլք՝ Դանիարդի վայն
համախմբելու նորանոր արգելք կամ գէթ յա-
պաղումն ի մէջ բերելուն համար: Սինչ այս, մինչ
այն, Դանիարդ Թերակզոյն արեան մէջ կրողոյ,
հողագործութիւնն կնիւարեայ, զիւղ և քաղաք
փրատակաց կոյտ կըլան, բնակիչը սրով և գերու-
թեամբ կապաւին, և Գերմանիոյ համաւեալ
իմաստասիրութիւնն, որ, եթէ ոչ ամենն լու-
սաւորն, գէթ աւելի մարդավայելն համարուած
էր ցոյց վայր, այսօր մարդագոյնի և աշխարհա-
ւերութեան տխուր տրամադանութեամբ կգոչէ որ
Գերմանիոն, լաճնուտ չափ, ոչ բրիտանիոյ
միջոցով և չի կարողանալ իրենց փոխարինել:

Ինչպէս կտեսնուի, ամեն արահանման յօդուտ
Գերմանաց են և ի միտ Դանիարդ, զորս եթէ
Դանիարդն ընդունիլ: Երապիոյ խաղաղութեան
վերահաստատութեանն արտոճաւ կըլլայ և ու-
այժմ երկիր չկորսներ:
Հիսթորիոյ Ամերիկայէն հասած լուրերն ամենն
ալ, զրեթէ Հարաւայիոյ շահաւոր են: Ֆրեդ-
րայնի նոր տարիքն ի վեր յալքուելէ, հալածուել-
լէ և Զարդ ուտելէ աւելի լուր չեն ուղարկեր
Եւրոպա: Եթէ այսպէս զնան դործերն, կար-

ԳԱՆՈՒԲԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս երկրէս կգրեն Երկրագործական Բերդին
Խոստովարներու թիւն, որք Մոլդավիա կըր-
նուկին, սակաւ ժամանակէ ի վեր, եւս աւելի շատ-
ցու: Լէհայիներ, Հունգարներ, Իտալացիներ
նաեւ Ֆրանսացիք անգամ հոս կծողմին. և
չառ ժամանակ չանցնիր, որ ձեզ խմացնեմ պիտի
մէկ նոր ձեռնարկութիւն, որոյ նմանն փորձեց
անցեալ տարի Միլիտանիի խմբին:
Այս անգամ երկու չուի վերայ կխոստին: Այս
յանդուզն մարդերս կկարծեն որ Մոլդավիան և
Վալաքիան իրենց ձեռնարկն ոչ միայն չեն խա-
փաներ. այլեւ օգնեն պիտի: Կարելի է արդարեւ,
որ չարդեւուն. իսկ օգնելու մասին, պարտք
կհամարիմ ձեզ հաղորդել որ ժողովրդեան մեծ
մասն այս իմեռական խորհուրդներս տեսնելով
և իմանալով յուսերնին միայն վեր կվերցնէ:
Գարայ կարտեսն ամեն օր 110 թնդանօթ ստա-
նալ, զորս Դանիարդի իշխանութեանց կա-
ռավարութիւնն ստապրելէ Փարիսի Գողցոյի
գործարանին: Կոստանդնուպոլիս լուրերէն կի-

մանաւոր որ յիշեալ հրապարակներն արդէն Առաքելոս հասեր են Յրանապի Մեղաւորի նուերով . բայց Պ. Պաղկոս զանոնք Պաղկոս յանձնելու պարտաւորեալ գտլով, այս թնգանութեան հոն կրնան, իրրեւ սեպակաւանութիւն մէկ Յրանապի, մինչև Դանուբի նաւահանգիստն մտնեն : Եւ կարեւոր է գիտել թէ Բ. Պաղկոս կրնայ անոնց տեղափոխութիւնն արդիւնէ : Բազմաթիւ աստիճանաւորներ արդէն Պաղկոս խնդրեցան որ յիշեալ թնգանութեանն ստանան :

Ռ Ո Ւ Ս Ւ Ս .

Անցեալներն Աւստրիոյ, Պրուսիոյ և Ռուսիոյ մէջ Սուրբ Դաւիթ վերահաստատութեան համարն տարածուեցաւ . և շատ լրագիրք, մանաւանդ Անգլիոյ Մօրկինգ-փօստն, ահագին աղաղակով մարտկոցներն անոր դէմ շտկեցին և Եւրոպայ ազգերն և արքունիքն շարժեցին :

Այժմ Պետերսպոլիսի լրագիրք, ի պատասխանի այն ամեն գոչմանց հետեւեալ ծանուցումն կ'ըստարակէ գրելով թէ. « քանի մի օտար լրագիրքներ յանձն առին հասարակաց դիւրահաւանութեանն իմացնել որ Սուրբ Դաւիթ մօտ օրերս վերստին հաստատուի պիտի : »

« Անցեալ յիշեալ, յայտնի է որ, անոնց նպատակն չէ թէ 1815 թուի Սեպտեմբերի յայտարարութիւնն է, — յայտարարութիւն սկզբանց, որ ընդհատուեալն զգացման խորհրդածութեան հովանաւորութեան տակ կ'ընէր թագաւորաց և ժողովրդոց իրաւունքն և փոխադարձ պարտքն : Այս անունով անոնք կ'իմանան զայն, որ յետ Ժամանակաց ըսուեցաւ զինակցութիւն թագաւորաց հակառակ ազատութեան ազգաց կամ թէ միաբանութիւն Եւրոպայի մեծ Տէրութեանց մէկուն գէշ : »

« Հէշտ է իմանալ այս Ժամանակագրութեան վրիպակի դիտումն, որ ուրիշ բան չտեսնուիր բայց միայն կուսակցութեան մեքենաւորութիւն, որ իր գրօշակին վերայ գրեթէ կործանումն Եւրոպայի, և որ երբեմն խառնի մէջ գործելով, երբեմն աշխարհի, ամենայն հարց ի գործ դնելով նաեւ ամենապարտաւորի, սերմաներէ ամեն սեղ կ'ստեղծ, առեւելութիւն, փոքրամեծութիւն և պատերազմ, վրիպակէր ընկերութիւնն, արդիւնքն նիւթական շահիւստ բարդաւանդն, և ամեն Տէրութեանց վերայ բեցուցերէ ստուեր գինեւոր հանդերձանքի ծանրութիւնն : »

« Հասարակաց կարծիքն աղէկ կ'համառօտէ այն կուսակցութեան անպարտքութիւններն, հասարակաց կարծիքն գիտէ անոր ըրածն ալ, ընկերքն ալ : Այնպէս այն գտեալ յիշեալ կուսակցութիւնն ըստ գործոց իւրոց, և յանարարութեան անոր որոշակի ըլլայ : »

« Այսօր խաղաղութեան, յառաջագիւտութեան և հասարակաց բարգաւաճելու Սուրբ-Դաւիթ միայն կ'արեւելէ : Ռուսիոյ մտնելով այն ծանրուն մէջ, ասոր աստիճանաւոր իր միասնակի կ'ընէ, և իր բարեկարգութեան գործերն ընկնելու համար հանդուստան ոչ ոք տանալով, անշուշտ, այս միասնակութեան մէջ իր տեղն տնկնալով վերջինն չ'ըլլար : Ասիայն այս Սուրբ Դաւիթ ոչ սքի չ'ըրար, ոչ գոր չ'ըրար, բայց միայն բոլորներն, որք վրիպակն չ'արշիւ կ'ապրին և պատմութեան,

ընկերական բարեկեցութեան և ժողովրդոց նիւթական լաւութեան ամենասաւաոր թշնամիներն են : »

Մ Ե Շ Ն Բ Ի Տ Ա Ն Ի Ս .

Լորդերու խորհրդարանին մէջ Կոմս Ռաշլըն հրաւիրեց Լորդ Էլենբորոյ Դանմարզի գործոց մասին ըրած զեկուցումն ետ առնուլ : Պաշտօնեան հակաճառութեան չ'վախնար, ըսաւ . բայց կարելի է, որ գործոց կարգի զննել անով նոր դժուարութեանց պատահի . եւ կ'յանկայ ըսաւ, քաղաքական իրողութեանց պատճառաւ, որ նոյն խնդրոց մասին ընկիր բանակութիւն ետ ձգուի :

Պ. Պաշտօնեան ըսաւ թէ նամակներ հաղորդէ պիտի խորհրդարանին, որք ցարդ հաղորդուածներու շարունակութիւնն են, թէ խորհրդակցութեան և զինադադարի մասին բանախօսութիւնն Էներն կ'ունեն տակաւին . եւ թէ մեծ յոյս ունի որ Դանմարզն խորհրդակցութիւնն ընդունի : Այն ատեն, ըսաւ Կոմս Ռաշլըն, կ'յուսամ, որ ի սկի մարդկութեան, եւ արդէն առաջարկեալ հիմանց վերայ զինադադարն երկու կողմէն ալ ընդունուի . սակայն գործն տակաւին երկարակիւն է : Հետեւաբար խորհրդարանն կ'ունենէ որ այժմ վճ յարուցանելն ցանկալի չէ :

Լորդ Էլենբորոյ կ'ստատախանէ թէ այժմեան պարագաներու մէջ վճ յարուցանելու պատճառ չ'ուզէր ըլլալ . բայց Կոմս Ռաշլըն պէս չ'կարծէր որ անկիւն ինչ և ինչ գէշութիւն կրնայ ծնանիլ ընդ հակառակն, կ'վախի որ վիճարանութիւն ուշանալով, այլեւ աղէկութիւն չ'պատճառէ : Լորդ Դեզաւտ կ'ըսէ որ Պաշտօնեան քառասուն կրոնէ միշտ անաւարտ բանախօսութիւններ :

Խորհրդարանն Ապրիլի 5ին ձգուեցաւ : Հասարակաց խորհրդարանին մէջ Պ. Օսթրոն հարցուց թէ կառավարութիւնն հատուղու անդի ունի որ Լոնդոնի դաշինքով հաստատուած Հոլանտի և Եւրոպայի յաջորդութեան տնօրէնութիւնն նոյն դրսութեանց խորհրդարաններն պիտի ընդունին :

Լորդ Փալմերստոն պատասխանեց թէ չ'գիտեր թէ դրսութեանց խորհրդարաններն բացուին պիտի թէ ոչ . թէ գիտէ որ Պերմանիոյ մէկ մասն բացուին կողմէ . բայց դրսութիւններն օտար գոբայ ձեռք ըլլալով, որք Դանմարզի արքայի, որ Հոլանտի և Եւրոպայի դաշինքն է, հեղինակութիւնն խափանեմէ, տարակուսելի է այնպիսի ձեռնհաս իշխանութեան գոյութիւնն, որ կարենայ զանոնք բանալ : Չ'գիտեմ բնականաբար, կ'յաւելու Պաշտօնեան, թէ ինչ ընեն պիտի այս խորհրդարաններս եթէ գումարուին : 1851 թուի դաշինքն այս խնդրոց վերայ բան չ'զուրկէր :

— Պարիսի Սիկիլիայի և Կապրիի միկիլի, և Կապրիէրայի արդի անապատաւորն, ամսոյս 22ին նաւաւեր է իր երկու օրուոյ հետ միասնեղ, որ Մալտայի միայն Անգլիա գոյ, եւ փոխաւոր ընդունելութիւն կ'ստանայ անոր : Ուսման կ'կարծեն թէ երեւելի մէկ վրիպակ է խորհրդ հարցնելու կողմ, այլ ևս, որ առելի հաւանական է, թէ իր հայրենեաց միաւորութեան և բարեկարգութեան համար յոյսած խորհրդոց կ'առարկան համար

ձեռնառութիւն խնդրելու կ'գայ : Ինչ և ըլլայ անոր առաջադրութիւնն, հաւաստի եմք, որ նա արժանաւորապէս պիտի ընդունուի : Երանի՜ թէ Մանչեստրի Ազգային Պատուելի Հասարակութիւնն ալ, իր կողմէն, վայելուչ մէկ պատգամաւորութիւն պատրաստէր որ անոր դաւաճուն շնորհաւորէ : Պարիսի լրագիրն պէս անձանց սիրտն այնչափ լայն և ընդարձակ է, անոնց խորհուրդն այնպէս վաւեր է, անոնց տեսութեան հորիզոնն ամբողջի հորիզոնին հաւասար գտլով, այսպիսի մարդիկ սերտ բարեկամ են ոչ միայն իրենց հայրենակիցներուն . այլ և ընդհանուր մարդկային սեռին : Ո'գիտէ թէ Պարիսի լրագիրն կամ թէ իր թոռներէն կամ ծոռներէն մէկն հանդերձեալ դարերու մէջ Հայոց ազատութեան համար չ'պիտի կուտի . . .

Յ Ի Ս Ն Ս Ս .

Երանի՜ թէ Երեւել և Երեւել ծանրակը չ'լու վիճարանութիւններ Էդմոն խոշոր և տալարանի ազատութեան մասին : Մէկ աղբիւսագիր հրաւիրելիք անտեսութիւնն և իրաւարարութիւնն որ խափու վարուին անկիւն դրս ածոց գէշ : Կոմսի միտման առաջարկեց Պ. զը Ռուսիայի բերնով գործերու կարգին միտ զննել : Սակայն բազմաթիւ ձեռնարկներ չ'երաժարան երեցան խնդրագրի հեղինակի ըրած զխաղութեանց և սահանջեցին որ զարկուի անկիւն և իրաւարարութեան այ Պ. Պ. Պաշտօնեան : Տէր կ'արդը Բոնչօղ, Ռուսիոյ տրք եպիսկոպոսն ալ, գտեցաւ յանուանէ վտանգաւոր գրոց չարաչար շատնալուն դէմ . ապա Պ. Ռաշլընի Յիսուսի վարք անուն գրքին վերայ առանձին խօսելով, պահանջեց որ դատի կոչուի անոր հեղինակն ըստ օրինաց, որ կ'ապտէ կրօնից անարդուն :

Պ. Դըլանդ ձիւ աստիճանաւորութեան և Երեւելեան հերքեց անոր կարծիքն 89 թուի սկզբանց գործութեան, եւ ամենապարզ Էդմոն կաւ հաստատեց որ Տէր զը Բոնչօղի առաջ բերած օրէնքին տակ չ'անկանիք ամենին այն մեղադրեալ գիրքն : Պ. զը Լազերոնիքն նոյնպէս վճին մէջ մտաւ և Ռուսիի Արք եպիսկոպոսի վարդապետութեան դէմ մարտեցաւ . սակայն անոր աստիճանաւորութեան Երեւելայի Փոխնախագահին պէս բախտաւոր չ'ըլլաւ .

— Մօնիսիօրն կ'ծանուցանէ թէ . « Սթէնքէն Մարտի 11ին կ'գրեն թէ 9 Երբորդ բառալիւնն որ Միտլնդի պահակն է, իր աստիճանաւորներն հաւաքելով ապստամբեցաւ : Իսկոյն երկու բառալիւն հոն ուղարկուեցան բարեկարգութիւն հաստատելու համար : Կապտմեն նաեւ քանի մի աւազակութիւններ, որք Սթէնքէնի դուներուն մօտ պատահեցան, եւ ամենագէշ տալարութիւն ըրին, մաւնաւոր որ քանի մի ատեն ի վեր այս տեսակ չարադրութիւններ գրեթէ բոլորովն դադարէին : »

« Գոսիսի Բիլիսի, որ արքայի հորեղբայրն էր մէկն է, ամսոյս 10ին հոն հասաւ : » Որոյ համար կ'ըսուի թէ յոնիական կ'ըլլայ Փոխնախագահ ըլլալու է :

— Նոյն պաշտօնական թերթն կ'ծանուցանէ թէ . « Գրիսի լրագիրներն կ'ըստարակեն որ կայսեր

ԻՏԱԼԻԱ

Իտալիա լրագիրն կճանուցանէ ըսելով «Պապն հիւանդ է տիրապէս, և ծանր՝ երեք օրէն ի վեր։ Ուրաթ օրն դնաց նա, ինչպէս Մարտի ամեն ուրաթ օրերն, Սուրբ Պետրոսի եկեղեցին։ Իր օթեկանն դառնալով տենդ ունեցաւ, որ երէկ ցորեկն մեղմացաւ, բայց երեկոյն այնպէս զայրացաւ, որ հարկ եղաւ շտապաւ բերել տալ անոր բժիշկ Պ. Վիալ—Պրետա գիշերուան մէկ ժաւուն։»

Հարաւային Իտալիա բարեբախտաբար աւազակաց թիւն օր աւուր կաշկիւն, ուր վերջին ատեններս Նինիօ Նանկոյի խումբն բոլորովին ջնջուեցաւ, եւ աւազակայեան սարսուռեցաւ։

Տուրինի Օիփիօն լրագիրն այս ատիւ կ'աւելու ըսելով. «Թէ աւազակաց որջն Հոռո է, ուր կան դեռ 300էն աւելի։ Իտալիոյ Տէրութիւնն անոնց հոն ըլլան Գրանտալոյ տեղական իշխանութեանն իմացուց, որ անոնց պապական սահմանն անցնելն խախտելու տնօրէնութիւն կընէ։»

—Սանիտի չորս հօշակաւոր աւազակաց դասն Սանտա—Մարիա իրաւարանի առջև տեսնուեցաւ, որոց առաջինն մահուան դատարարուեցաւ, և երեքն՝ քրայի աշխատութեան։

—Նորադայն լոբերն կճանուցանեն որ Սրբազան Պապի հիւանդութիւնն անցեր է բոլորովին, որ և կրցեր է տեսնութիւն ընել Գրանտայի դեսպանին հետ։

ՊՐՈՒՍԻԱ

Պրուսիոյ Մօնիտօրն քանի մի օր առաջ պատահած նաւամարտի վերայ հետեւեալ յայտարարութիւն կ'ընտարարակէ։

«Հանձն նաւապետն Մարտի 17ին, երեկոյեան 10 ժամուան Սվինմուդէն կղզի թէ Սրիւնա և Նէմֆ, որբայական (պատերազմական) նաւերն Սվինմուդէն Գիւլընով չուեցին այսօր, ապա՝ Սրիւնա առանց Դաննարգայի դէտերուն (կօսազեօր) հանդիպելու։ Այս օրին կէս ժամ անցած Դաննարու Եօթն նաւ նշմարեցի Սրիւնայի արեւելեան դին. և Աուհն նաւապետն, որ Լորէյ նաւով Թիսովէն դադով ինձ հետ միացաւ, իմացուց որ անոնք Դաննարու Գրեգատներէն։ Պատուիրեցի որ թնդանօթակիրներն դէպ ի ծովային վարեն. և Սրիւնա, Նէմֆ և Լորէյ նաւերով թշնամի վերայ վաղցի ճակատի կարգով։ Թշնամին այն ատեն պատրաստուեցաւ և իր նաւերն երկու խումբի բաժնեց։ Յիշեալ նաւերուն մօտենալով, հաւատարմ եղաւ որ Դաննարն դէպ ի մեզ կ'նաւէին մէկ եռալարով, երկու Գրեգատով, երկու կորվետով և մէկ սղոնապատ Սկուտով (այլ և այլ տեսակի նաւերու անուններ, զորս աւելի կ'սիրեմ հայացնել և ընդունել քան թէ ելէ փանդական ոճով թարգմանել), ամենն ալ պտուտակաւոր։ Սեր նաւերն երկու ժամին կրակն սկսան, Դաննարն իօլոյն պատասխանեցին. եւ այսպէս զիրար թնդանօթակոծեցինք մինչև 5 ժամն։ Դաննարն հաղածեցին Սրիւնա և Նէմֆ մինչև Սվինմուդի դիմացն։ Հինգ մեռեալու նեցանք և 8 վիրաւոր, որոց մէկն Ձեր Վեհափա-

ռութեան կորվետի առաջին աստիճանաւորն է, այն է տեղապահ Բերթէ, որ նաւամարտի սկզբին իմ բոլս ծանր վէրք առաւ։

«Բարեբախտութիւն կղզաւ ճանուցանելով Ձեր Վեհափառութեանն թէ պաշտօնեայք եւ զօրականք արիարար և անչիօթ վարուեցան այս մարտիս մէջ։ Լորէյի յայտարարութիւնն տակաւին չառիւանիկա թիսով դարձաւ։ Թնդանօթակիրներու առաջին մասն կուռին մէջ չմտաւ, ուստի կարելի է որ կորուստ ալ չունենայ։ Դաննարու նաւատորմն ամենայն մասամբ մերինն վերագոյն էր. սակայն անոնց կորուստն մերինն գրեթէ հաւասար ըլլաւ։»

Պրուսիոյ նաւապետն իր յայտարարութեան վերջն կ'աւելու թէ. նաւատիներն աւստի և ուսելով լեցուն են. յայտարարութիւն, որ կատիպէ մեզ հարցնել թէ եթէ Պրուսիոյ նաւատիներն ծեծ ուտելն և վախճելն ետոյ այսքան սաստիկ եռանդով լեցուն կըլլան ի՞նչ տեսակ եռանդն ունենային պիտի եթէ յաղթէին կամ գէթ չվախճէին։

ԹԱՆՊԱՐԱՆ ԵՊԻՊՏԱԿԱՆ ՀՆՈՒԹԵԱՆՑ

Մօնիտօրի մէջ կ'կարդանք։ Բուլար. Գաշիլիէի մօտ) 3 Մարտի 1863 ամի։

«Թանգարանի վերայ ձեզ լաւ տեղեկութիւններ ունիմ հաղորդելու։ Փոխարան իր դահաւարութեան օրն զիս բերդն կոչեց և հաճեցաւ ըսել թէ իր նախորդի մահուամբ իմ վիճակս գէշնաւու տեղ աւելի լաւ հաստատուելու է։ Մի և նոյն ատեն Իսմայիլ Պաշան ինձ յայտնեց թէ այժմէն իսկ որդերէ հրաշալ թանգարան մի կ'անգնել Էսքիսէի, այսինքն Գաշիլիէի այն թաղին մէջ, ուր Երոստայի երթի եկելութիւն կընեն։ Երևուածն իսկաւ շատ ընդարձակ պիտի ըլլայ։ Եղիպտոսիան հնութեանց թանգարանին դատ, որոց համար բնականաբար պտուտեց տեղն կ'աւանդի, պիտի ըլլան նաև թանգարանի Եղիպտոսի մէջ ժողոված յունական հնութեանց և և Արաբաց, որպէսզի պահեն այն հիւանդի կտորուանքն, զորս այժմ Գաշիլիէ կ'աճառեն, օրինակի համար, մղիթաց կանթեղներ, պղնձի մոմակալներ հանդերձ արծաթի կիտուածովք, քիֆի արձանագրութեամբ զարդարեալ անօթներ, սատարեալ կահք և երպին երկն կտորներով շինուած ձեռագործք. միով բանիւ։ Արաբաց հին բաղարակրթութեան այն ամեն նշխարներն, որ Եղիպտոսի մէջ շատ փառաւոր հետք թողել է։»

«Վերջապէս Գաշիլիէի թանգարանին կցուի պիտի նաև Եղիպտոսի ձեմարանն, որոց կ'աւանդարին ըլլայ պիտի մշտնջենաւոր ատենադպիր։ Զեմարանն ունենայ պիտի հարկաւ և գրաստուն, որ նորերով գրեանք ստանայ պիտի և յատուկ մատենապետ ունենայ։ Կարճ. փոխարանին կ'աւելի, ինչպէս կ'ունենէք, թանգարանն Եղիպտոսի գիտութեանց ճշմարիտ կենտրոնն ընել։ Նորին Բարձրութեան Իսմայիլ փաշայի հաստատումով թիւնն, զոր ամեն մարդ գիտէ, չեմ տարակու-

սիր, որ այս գեղեցիկ տաղարկութիւնս ի կատար հանէ։»

«Գիտէք որ թանգարանն, իմ միակ գիտելի պտուղն գործով, այժմ 22,000 յիշատակարան կտարուեալէ։ և դուք, որ զայն տեսնէք, կրնաք ըսել, որ երբոր ամեն առարկաներն նոր չնքին մէջ իրենց յատկացեալ տեղերն դասուին՝ Երոստայի մէջ հաւասարն չունենայ պիտի։»

«Ձեր չուէն յետոյ վերադին վերին Եղիպտոս գնացի։ Սրիւգոս հարկերի չափն որ սխալակներ ստացայ այն տեսակէն, զորս գիտէք (ժր. և յգ ճոխութեանց)։ Թերաց գիտութեանց նիւթ սակաւ կայ. այլ շատ ընտիր մոմիաներ, որք թանգարանն աղէկ զարդարեն պիտի։ Սան, (հին Տանիս), որ Պ. Պ. Բուլարի և Մարիետտի ապացուցեալ հովիւ թաղաւորաց հին Ավարիսն է, շատ ոսկեղէն առարկաներ հաւաքեցինք, որք ԻՍ. անձանթ հարստութեան քանդակազարդերն ունին։»

ՇԵՐԱՏ

Երկու տիկնայք այրանտիկ տաճման և անկէ կարծ հանելու բարեբարք եղան Ծրանապի մէջ։ Տիկին Կորնէլյանն լոմէն կարծ ընելու հնարն դատաւ. տիկին Բամնուն զայն արտադրող միջատի սնունդն դատաւ այնպէս առատ, որ չափ կցան կամր ունենալ։ Անոնք իրենց անունն ընկերացուցին այսպէս Պ. Դերեն Մինիլի անունն հետ, որ դանոնք Ծրանապի կլինային ընտելացուց և բաղմնացուց։

Չինայիք, որոցմէ շատ բան կուսանիք, թիկնիկ երկրորդ տերնն, առանց ծառի ոյժին փնտերու, ի շահ անձանց վարելու տարրիկով մէկ հնար երևակայեցին։ Աշան տերեւներն, դեղնէլէն քիչ մի առաջ, կ'ոգուեն, կ'չորցունեն, ասանք մէջ կտորներն և խարխալէ անցունելով կըտեն ամեն փայտեայ մասունքէ և տեսակ մի փոշի կ'առանան։ Այս փոշիս անօթներու մէջ լեցունելով կ'աւանդի բոլոր ձմեռն չոր տեղ, և մատաղ որդերուն կկերցնեն անոնց ծնելուն պէս, երբեմն միայնակ, երբեմն ևս բրնձի կամ ոլանե ալիւրի հետ խառնելով։

Ծրանապ այս եղանակս շատ շերամատաճուներ փորձեցին, մանաւանդ Պ. Դամպուատօ, որ Տուրքայի մէջ յաջողեցաւ կատարելապէս։ Փորձն, երկի թէ, փարատեց այն տարակոյսն, ըստ որոյ մատաղ որդերն, կարելի էր, որ չհրնային ուտել և մարսել այն փոշին առանց նախ թրջելով զիւրացնելու պայն։ Գուցէ թիկնիկ տերեւներն կաւահին մի և նոյն կերակ, ինչպէս որ Գորի լեռան այժմեականներն կ'աւանդի խաղողի տերեւներն, կամ թէ զանոնք չորցնելէ ետոյ, զս ջրով կկակցեն եւ որդերուն բաժնէլն առաջ կցամբեցնեն։ Զիարդ և իյէ. կարեւոր է Չինայ ոճն փորձել։ Ո'գիտէ, որ կոպտուելով և նաչհի հետ խառնելով բուսական ապականաբար ախտի ներգործութիւնն չպիտի խախտեն, որ շերամի հիւանդութեան սկզբնապատճառն է։

Թիկնիկ տերեւներն եթէ իրենց բնական հանդամանքն պահեն, աղէկ կ'աւանդանայ այն շահն, զոր ստանաւոր պիտի կրկնապատկելով մետաքսի բերքն թիկնեայ մի և նոյն թուով աշնան տերեւներն միայն պիտոյացնելով, որք մինչև հիմա կկրտուէին։

Յետիտն (ժառիտն) մեզ ղեղարկած ծանրաղին մետաքսէն զատ, ունի նաև քցլ տեսակ մե-

արքունեացմէջ իր առաջարկած ձեռնարկութիւնն անտարբեր և ցուրտ ընդունելութեան հանդիպեցաւ : Ո՞վ սիրահարէր պիտի այս Լոբորադայիս — կասկածոտ և հաստատական Սկոտիան : Սկովտիայի, արբ և կանայք, տեսակ մի խելագարութեամբ դիմեցին խուռն բազմութեամբ բաժանորդ գրուիլ Դարեան ընկերութեանն — Darian company : Գրեթէ մէկ վայրկեանի մէջ հաւաքեցին 400,000 լիրա ստերլինգ այնպիսի ստեն, որ Սկովտիայ մէջ 800,000 լիրա ստակ միայն կար : Ուրեմն ասիկա հասարակաց հարստութեան կէտն էր, զոր աւելաց և արկածներու յանձնէին պիտի :

Չուն 1698 թուականի 26ին Լէյթի նաւահանգստէն մեկնեցաւ . արշաւողներու թիւն էր 1200 հոգի՝ հինգ զօրաւոր նաւ ելած, որոց կառավարողէր Վիլլիամ Պատերաօն անձամբ անձին : Երկու ամիս նաւելէն յետոյ, պարանոցի կուշան հասան 15 հոգի միայն կորսնելով . բայց անբոլոր զանազան տեղ, զոր կյուսային գտնել, անոնք գտան հիւանդութիւն, անօթութիւն և Սպանիացուց ստերն, որք նախանձոտ աչքով կնայէին այն ոտին դադթու կանութեան իրենց մօտ հաստատուելուն վերայ : Որպէս թէ բաւական չըլլար գաղթականներու կուռէն ամացութեան, հիւսիսային մարդիկ սպառող կիլիմայի և չնական թշնամիներու դէմ, անոնք աւելի ևս նեղութիւն կրեցին Անգլիոյ Տէրութեան թշնամութիւններէն, որ անոնց հետամուտ եղաւ նաև ծովերու անդին : Հնդկաց արեւելեան ընկերութիւն, East India company, կկասկածէր այն առաջագրութեան կատարուելէն, որ իր մենավաճառութեանն կապաւնար, և ի գործ դրեցէր իր և իր բազմութիւն և զօրեղ բարեկամաց բոլոր ազդեցութիւնն որ Պիլիամ Գ. սիրտն Դարեան արշաւանքին դէմ դարձունէ : Սկովտիա, ութ ամիս ամենևին համբաւ չստանալով՝ 1,300 մարդոց մէկ երկրորդ չու ուղարկեցաւ ջիւնն զօրացունելու համար : Ծովագնացութիւնն գէշ եղաւ, մէկ նաւ մորի կէն կորսուեցաւ, ուրիշ նաւերու մէջ խիստ շատ ճանապարհորդ մեռան, սպրածներն ալ ոգեսպառ և ցանուցրիւ հոն հասան իրենց յառաջմէ գնացած եղբայրներու հոգեւարին ակամաստես ըլլալու համար : Սկովտիայի գաղթականներն թէև ամեն թշուառութիւն համանգամայն կրեցին . այլ հաստատուն կեցան մինչև վերջին վայրկեանն : Անոնց վիճակն իրենց թշնամիներն անգամ ի գութ չարժեց : Ամեն գնացողներէն 30 հոգի միայն Լէյթի նաւահանգիստն վերադարձն տեսան, որք մեկնելու ատեն արդէն կմախքի և ստուերներու կնմանէին քան թէ մարդոյ, և հազիւ կրցան խառիսին ի վեր քաշել : Այս յետիններուս մէջ էր Վիլլիամ Պատերաօն : Այս սողնաբեր չուս Սկովտիայ մէջ կսկծագին յիշատակներ թողուց, զորս ժամանակն չլրացաւ ջնջել . պատմութիւնն իսկ ազգային աղետից վերայ հրաշք յաւելցուցեց : Ռօքսբորի շինականներն աւանդութեամբ կալահեն, որ մէկ զիշեր . — զիշեր օրհասական, յորում Փանամայի կրճին վերայ մեռաւ Լորդ Տօրփուդը որդին, ապարանքի բոլոր զանգակներն, անտեսանելի ձեռով չարժուած՝ մահուան զանգն զարկին : Այսպիսի աղետէ յետոյ, կվախնամ որ այն երկիրներն, որ մարդոց և ձեռնարկութեանց արժէքն ըստ յաջողութեան միայն կգատեն, Վիլլիամ Պատերաօնի յիշատակն առ յաւիտեան խաւարած չըլլայ . ստիպան մեր հարեւաններն, որք արժանաւորութեան և ձախորդութեան, ամեն մէկուն, իր մասն կտան, Անգլիոյ և Սկովտիոյ

Բաներու հիմնողին դեռ մեծ պատիւ կընծայեն, որ բախտի ձախորդ բերմանցն չնայելով, դեռ կտնէ :

Դարածին բանքն, որ ի սկզբանէ հետէ the governor and company of the Bank of England (վարիչ և ընկերութիւն Անգլիոյ բանքի) անուամբ ծանուցեալ էր, հաստատուեցաւ նախ ի Merchants' Hall (չուկայ փերեղակայ), ուր քանի մի ամիս միայն մնաց . ապա ի Grocers' Hall (նոսրաց շուկայ) փոխադրուեցաւ, ուր մէկ մեծ դահլիճ միայն բռնեցէր : Մի և նոյն դահլիճն մէջ վարիչներ, ատենադպիրներ և գործակալներ ի մի ատին կաշխատէին այլ և այլ աթոռներու վերայ նստած, տնտեսական դատարարութեան ատենախնդրութեան համեմատ : Սկզբնաւորութիւնն ծանրատաղտուկ եւ նուաստ էր : Անգլիոյ բանքի գործողութիւններն թէև աննշան էին այն ատեն . սակայն այս հաստատութիւն սկիզբէն ի վեր երկրի առևտուրի եւ քաղաքական կենցաղի վերայ ազդեցութիւն ունեցաւ : Դահլիճն սկիզբէն, արժէքի չընդադայութիւնն շատցուց, նա մասնաւոր ժողովուրդն արքունի մտից վարձակալներէն (extortioners) ազատեց : Պիտել արժան է, որ մինչև 1694 թիւն Անգլիոյ կառավարութիւնն փոխառուներու ձեռքն էր : Գանձի նեղութեան և ժամանակի բերմանց պատճառաւ Տէրութեան փոխառութիւններն մեծ դժուարութեամբ կըլալին : Թագաւորներն ստիպուեցին իրենց գործակալներն քաղաք ուղարկել, մանաւանդ Exchange-alley ըստած տեղն՝ ստակ մուրալ . Mendier (մուրալ) խախտան բառն է . ըստ որում ինքնին վէտն Հենրի Ը. կնայցէր գէշն իբրեւ մեծ շնորհ (a matter of great grace) : Իրաց այս հին վիճակի վերայ ո՞վ պիտի զարմանայ : Հրով և սրով կարելի է յարձակիլ ազնուականաց վերայ, կարելի է Բարոններ և եպիսկոպոսներ Լոնդոնի Աշտուրակ ուղարկել և մենաստաններն կործանել . բայց դնայք խառն ստակ պահանջել : Եթէ վաճառականներն բանդարկուին՝ հասարակաց ճիւղութեան ակունքն կցամբին : Ամենաբայարժակ թագաւորներն անգամ հարկադրեցան շոքորթել ոսկւոյ գաղտնի զօրութիւնն, որ բռնութեան երեսէն կիսալիւ և կարհուտի : Տեսութեան այս կետէն նայելով Անգլիոյ բանքի հիմնարկութիւնն, պէտք է որ, համարուի, իբրեւ ընկերական մեծ արարք : Այնպիսի մէկ պտենի մէջ, ուր անգլիական ազգն կսկսէր ձեռնալ ազատութեան սկիզբունքն վերայ, բանքն Տէրութեան և ժողովրդեան կապն եղաւ : Մէկ կողմէն դրամադրիս ունեցողներու վստահութիւնն կենդանացուց, միւս կողմէն, տէրութեան յարգն բարձրացուց : Հարկ է յաւելուլ նաև որ այնուհետեւ առ և օտարի տարրի կարողութիւնն խիստ շատ զարգացուց : Լոնդոն քաղաքի վաճառականաց կարևորութիւնն դեռ ըստ բաւականին ճանչցուած չէ անգլիական ընկերութեան խնայողութեան մէջ : Ուրիշ աւելի բարձր կարգեր կան, որք ևս առաւել կերելին . սակայն անոնց ազդեցութիւնն աւելի արդիւնաւոր չէ վերջապէս հասարակութեան իրողութեանց վարչութեան վերայ : Ամեն մեծամեծ ձեռնարկութիւններ ստիկ կարօտ են . և քաղաքի վաճառականներն տէրութեան քակի ժապաւններն բռնած ունին : Այս հետևանքս զարգացան Պատերաօնի կենդանութեան ատենն անգամ : Հազիւ բանքն հաստատուեց էր, որ

1695 թուի պատերազմի յաջողութն ձեռնառե եղաւ . բայց և այնպէս դրուած էր, որ այն երկու մարդերն, որք այս երեւելի դարձիւ ձեռնառու եղեր էին, զժրախտ վախճան պիտի ունենային : Գօդֆրէյ, Վիլլիամ Պատերաօնի նախանձախնդիր օգնականն, Վիլիամ Գ. որ այն ատեն Նաւուր պաշարներէր, ստակ տանելու վտանգաւոր պաշտօնն յանձն առաւ . այլ երրորդ խրամներու մէջ արքայի հետ կցուցէր, թնդանովի հարուածով սպանուեցաւ :

Անգլիոյ բանքն այս ատենէս ի վեր այլ և այլ բախտներու պատուհեցաւ . երբեմն ևս մարկայից բախտի, միշտ տարուէ տարի իր կարևորութիւնն եւ ծառայութիւններն աւելցնելով : Ընկերութեան արտօնութիւններն, որք առաջ միայն 11 տարուսն համար տրուած էին, յետոյ նորոգուեցան և տէրութեան խորհրդարանի վճիռներով քանի մի անգամ երկնցան : Ստոյգ է, որ ամեն նոր կապաւնգիր, եթէ կարելի է այսպէս կոչել, տէրութեան համար նոր փոխառութիւն ընկեր կամ այլ և այլ կերպիւ օտակ ստանալու նոր առիթ էր : Բանքն այսպէս կզնէր իր կենդանութեան իրաւունքն : Անգամ մի հաստատութիւն գտնուէն յետոյ, մէկ շատ հետաքրքրական կից դէպքով կերպուեցէր այն իր ազդեցութիւնն հասարակաց իրողութեանց քաղաքականութեան վերայ : Ի վերայ այս ամենայի, մեր նպատակն չէ երկարել հոս (1) մեր ճառն այս հաստատութեան սնցածին վերայ : Անգլիոյ բանքի արդեան վիճակն է, զոր այժմ յատկապէս գիտել կամիմք . Բալանդակ Լոնդոնի մէջ չկայ բնաւ մեծ փողոց, այնպէս երթեկեկով լեցուն, ինչպէս այն . որ փոխան Դարինգ-կոմսէն դէպ ի Լորդ-մէրի տունն (Mansion House) : Օտարականն, որ հետաքրքրութեամբ գիտել կուզէ այս ամբողջաւ փողոցիս երկայնքն, լաւ կընէ, եթէ օմնիքիս տանիքն ելլէ : Որքան ունի մօտենայ քաղաքի սրտին, այնչափ ունի խառնած կտենէ մարդկեղէն անտառն, — անտառ չարժուն, ինչպէս Macbeth ի մէջ Բիրնամին : Խորհրդով է որ մարդոց կըսեմ . ըստ որում քաղաքի մօտերն կանանց թիւն յայտնապէս կտակալի, գուցէ այն ցեղ կնիկներէն զատ, զորս հոն կքարէ ոսկւոյ փայլն, ինչպէս ըստ կբաշէ մոծակներն : Կարելի է ըսել նոյնպէս, որ կերպարանքն ալ յատկութիւնն կիտիսեն : Չխիսայղի անցանորներն նշանաւոր են իրենց շղոյ և գործօնեց քայլուածով, վսեմ երկայնքով և այն ծանր մոտատանջութիւնով, որ բանելու մօտ մեծամեծ տուրևառութիւններ կթխէ : Մէկ քայլ ևս, ահա իրօք ստիկ մարդոց (world of money) մէջն ես : Եթէ կռնակը Լորդ-մէրի տանն տա՞ ալ կողմը կարծրանայ Royal Exchange (Բուրս) և Stock Exchange (Բուրս հասարակութեան գոյից), դիմացը կարծրանայ Անգլիոյ բանքն :

Այս յետին շէնքս, ինչպէս կըսեն, կտորներէ շինուած է . այլ գիտնական մէկ ձեռք յանձն ոտերէ այլ և ալ ատեն շինուած մասերն իրարու կցել և վերջապէս տալ անոնց մէկ հոյակապ շէնքի միւս :

1. — Անգլիոյ բանքի անցեալն գիտելու համար կարելի է կարդալ History of the Bank of England; its times and traditions ըստած ազգիս գործն, զոր Պ. Յովնալ Յրանկիս, եղև իսկ բանքի պաշտօնական ղեկ մէկն շարադրել :

ձեռք բերան դրուի : Առաջին բարն դրուեցաւ ի
Threadneedle-street. 1732ին Պ. Յոհան Հուրլոն,
բանքի տառաջին վարչի տան և պարտիզի տեղին
վերայ . 1734ին շինուածն , որ ճարտարանկար
Պէտրոս Սամսոնի գործն էր , ընկաւ : Ասիկա շատ
փորրիկ չէր էր , որ Սուրբ Քրիստափոր — le-stocks
եկեղեցւոյ , կապելիօններու և բանի չափ բա-
ղարացոյ տուններու ետեւն ըլլալով , հազիւ ան-
ցաւորներուն տեսանելի էր : Կարող եմ իդէա
առնուլ այս սկզբնական շինուածի վերայ երբոր
հատուցման դահլիճին (pay-hall) այցելութիւն ընեմք ,
որ այժմ գլխաւոր դրան դիմացն է . և որոյ մէկ
ծայրն կտեսնուի Գլիլիօմ Գ. անդրին : Այս դահ-
լիճն , որոյ ճարտարապետութիւնն թէև փոխու-
թափուած էր , էր գրեթէ հին լոյրը բանին :
Մէկ բաւորը դարեւ ետոյ , այսինքն 1760էն մինչև
1786ն չէրն միշտ ընդարձակուելով , լայնեցէր
արդէն մէկ եկեղեցի և մէկ ամբողջ ծխապետու-
թիւն : Երկրորդ կերտուածներու բազմաթիւ
հետքն տակաւին կերելին , Ռոբերտ Տայլորի
ձեռամբ բուն չէրի վերայ յաւելցուցած թեւերն ,
մէկ ճիւղ բարձրացան հանդերձ երկու մեծ ծառով ,
ծառիկաւորը մարդեր և մէկ աղբիւր : Այս բու-
րաստան , որ զով և կանաչ կտիւն բանի բակերու
մէկուն մէջ , Սուրբ Քրիստափոր — le-stock ըսուած
եկեղեցւոյ հին գերեզմանատունն էր . և օրէնքն
չէր ներքեր որ շինութիւն ընեն նորակաւ գետնի
վերայ : Մեռելներն ապաքին ընծայեցին ժող-
վորեան այս բուրաստան : Այս Գոհան Սոն 1788ին
բանքին ճարտարապետ կարգուելով շինուածի այլ
և այլ մասերն վերադարձ տեսնեց և անոր այն ընդ-
հանուր կնիքն դրուեց , որ տակաւին կիկեայ :
Պարոն Ալֆրեդ Լաթամի , այժմեան կառա-
վարչի , մեծարանին մէջ Մարտի հանձարեղ
նկարչի մէկ պատուական պատկերն տեսայ , որ
Անգլիոյ բանքն կերեցունէ այնպէս , ինչպէս որ
էր 1802 թուականին : Հին Բուրն (Royal Ex-
change) ուղղանկիւն կերկնար այն տունն հրա-
պարակին վերայ , ուր այժմ կանգնած է Վելլինգ-
տոնի արձանն , և կյոյէ երկրորդ ծրարիւրն

Պիտի շաշաւակաւի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ :

[Տե՛ս քիւ. 2 և 3]

պէս , օրինակի համար , Գաւարդինի սեպաձև սարն :
Կան հոն գեղին խաչաքերով պորթիւր , կանաչ սոր-
փիւր և տեսակ մի կանաչ յասպիս , որք , թուր ինձ ,
Աղտուելու ձորին , արժանի է որ տան «որձաբարե-
րու երկրի մականունն » : Զարմացայ տեսնելով
այն կարմրագոյն բարերու ամբաւ յաճախութիւնն ,
որք տեղ տեղ իրենց գոյնն արտերու հոգին կհաղոր-
դեն : Զուրուտանի խաղաղներու գեղեցիկ հան-
գոյցի առջև պորթիւրներու աղւոր նմուշներ հա-
ւարեցի : »

«Գիւրուտ գը Մանգերիցո , իրեն գիտակ երկրա-
բանութեան , նկարագրեց այս խնդուն գաւառս ,
որ մարեաց ցեղի հօտեր տեսի , որք աջ ուժաւի կա-
խուած գէլ աղի ունին , որք և կենդանիին տար-
րինակ երևոյթ կտան : Հայերն այս լայն աղիս
դմակ կրսեն . Թաթարներն գոյրուգ : Գարձեալ ,
ուղտերու բազմաթիւ կտրաւաններու հանդիպե-
ցայ , որոյմէ ամանք կրպէլին ապրանաջ երկայն և
ահագին հակեր կրելով , այլ արտներու մէջ կը

հանգչին : Քաղաղ ուղտերու կտրաւանն երեք դաս
բաժնուած էին և ամեն շարքին մէջ տասնական
ուղտ կային : Անոնք իրարու կապուած էին փոկով ,
որոյ մի տունն անասնոյ գլուխն էր , միւսն՝ համե-
տի մէկ կողմին վերայ : Այս կենդանեաց շար-
քն հետաքրքրական տեսարան է : Ուղտերու մի-
ջոյն անոնց մէկի պարկած ատեն ունեցած երկայ-
նութեան հաւասար էր : Եարբի գլխաւորներու վի-
զըն արդիւր զանգակներ կախուած էին : Անոնք , որք
կարած էին , երբեմն խոտ կարծէին այն արօտին մէջ ,
որ կարաւանն իջեր էր , երբեմն՝ ծառոյ տերե-
նէր , որոյ , երկար վիզ ունեւելով , դիւրաւ կհասնէին :
Հատած կամ ծաղկաւորի ուղտն հետաքրքրական
տեսք ունի . անոր ծնգերն անոր տակն ծաղուելով
անցայտ կըլլան բոլորովին : Անոր վզի վարի մասըն
գետնի վերայ յենելով , ուր կարծես մինչև փորըն
թաղուած է » :

«Տարանտասիս (կառք) նորոգութիւնն դիւքանի
մի ժամ արդիւրեց Գիլիշան , ուստի մէկ ճամբայ
Ալեքսանդրապոլ կտանի : Ես զայն արեւմտեան
կողմն թողուցի և հարաւի ուղին բռնեցի , որ Զի-
րուպոլ կտանի , Վրաստանն Հայաստանէն բաժնող
Բաղրակի ողնաշարն անցնելով : Այս կապուէս

Պիտի շաշաւակաւի

ՀԵՌԱՍԻՐԱԿԱՆ :

Կրպիւնեազ . 23 Մարտի

Արբան և պատերազմի սրաշտենան այսօր
կուրի թաղորոնն կերթան :

Երէկ երեւոյթանաց խորհրդարանն (Ռուսազը-
լապ) գոյուեցաւ : Արքայական ճառն կըլէ որ
Դանմարգ դեռ մինակ մնացեր է . եւ չգիտէ ի՞նչ
Եւրոպան կտախին , որբան ժամանակ անտա-
րեր աչօր նայէ պիտի գործուած բռնաբարու-
թեանց վերոյ , Դանմարգի Տէրութիւնն խաղա-
ղութիւն ստանալու համար պարտաւոր է ամեն
տեսակ զոհ ընել . բայց պէտք է , որ իր թշնամիքն
գիտնան թէ դեռ ժամանակն չէ եկեր , որ
անխիստ նուաստացուցիչ խաղաղութիւն ընդունելու
բռնադատուած ըլլայ :

—Թշնամին երէկ Ֆրեդերիկիայի տուէլէն իր
բռնած զիւրն թողլով ետ բաշտեցաւ :

— (Պաշտօնական) Սուրբիլիտ նոր բան չպա-
տահեցաւ : Այսօր արբան , պատերազմի սրաշտե-
նան և սարաւանդան զօրաց դիւրին այցելութիւն
ըրին : Ծովային սրաշտենացն Ֆեմերն կըզին
սրաշարեալ հրատարակեց :

Վիկենա . 23 Մարտի

Ընդհանուր քրտակցութիւնն կճանաչուանէ թէ
Կաթիկա և Տիւր զօրավարներն այժմ Վանուբան
իշխանութեանց մէջ են և շատ լաւ կարգաւորեալ
ապստամբութեան գլուխ անցեր են :

Պետերսբուրգ . 23 Մարտի

Օտարաց վերաբերեալ օրէնքն փոփոխելու
առաջադրութիւնն կըլլէ Ռուս կանանց կաշուածոյ
պարտաւոր վաճառումն եթէ օտոմոլականաց հետ
ամուսնանային : Անիկա կըլլէ նաեւ կոյսեր հա-
ւանութիւնն այսպիսի ամուսնութեանց համար
ևս և այն հարկն , զոր Ռուսիա ստակուող օտա-
րականներն վճարէին պիտի երբ տարի :

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Գեղացի մը քաջանային կը խոստովանի թէ խոտ գողցաւ .
քաջանան կըհարցունէ . « քանի՞ կապ էր գողցածդ » . — « ատիկայ
քեզի պէտք չէ դիտաւ . սէպէ՞ թէ կառք մը լեցուն վանդի առ
դիշեր մնացածը տուն բերելու համար կնկանս հետ նորէն պիտի
երթամք » :

Այստեղ փոքրիկ աղջկան մը հարցունցին . « Ի՞նչ է ոչինչը »
պատասխանեց . « գոցէ՛ աշունները և պիտի տեսնես զանս » :

Բարեպաշտմարդ մը օրերով մը հարցաւ . « կնկան մը պարտաւորու-
թիւնը ի՞նչ է » . « պատասխանեց . « հարցուի , երգել , կարաւել ,
բնանօթօրը չալել , գաղղիկներն սորվել և սեղան նստելու համար
սրտորաստուիլ » : բարեպաշտը կը մարի :

« Պողոսիկ՝ մայրդ քեզ կը ձեռնէ » . — « չէ բայց հեծելէ գէշ
բաներ կընէ » . — « Ի՞նչ է ան » . — « Ինչէ , ամեն առաւօտ երես-
ներս կը լուայ ու մազերս կը քանտրէ » :

« Ճօն Ճօն՝ կըպտայ նաւատի մը իր ընկերներէն մէկուն , որ
նստով Մայիս կերթար . « Ի՞նչ է » . կըսէ Ճօն . — « Ի՞նչ է մի
եղբայր ծովը ինկաւ » . — « Ծովը » . — « այո » . — « վա՛յ , գար-
չիկ՝ կընայի՞ր , թաշկինակս և հին կոշիկներս վրան էին » :

Զար մարդուն մէկը եկեղեցականի մը սպտակ զարնելով կըսէ .
« Մեր Փրկիչը ըսաւ . եթէ մէկը երեսիդ սպտակ մը դարնէ-
դարձուր անոր մէկուն ալ » . եկեղեցականը կըպատասխանէ .
« Աւետարանին առ խօսքին և տրք միւս երեւոյ չե՞ս կարգադր , որ
կըսէ . « Ինչ չափով որ չափէր , նոյնով պիտի չափուի ձեզի » .
կըսէ չափը , անանկ սաստիկ հարուած մը կուտայ , որ չարը թէն-
կէլ մենկէլ զիմացի պատը կը համի » :

Մարիամ տիկինը կըսէ . տղաքներս այնչափ փափուկ սրտի տէր
են որ , եթէ սափոր մը ջուր բեր ըսելու ըլլամ անոնցմէ մէկուն ,
յանկարծ աչքերը արտաւրով կըլնան :

ՆՈՒԱՍՏ ԳՈՐԾ ՄԸ

Երբոր ես պզտի տղայ մըն էի , և փողոցներուն մէջ կը խաղայիս
իզմէ պզտի տղու մը պատահեցայ , որ մեծ տրտմութեան մէջ էր .
իր աչքերը լալով ուռած էին . և իր բարձր աղաղակը իս իրեն
մտնեցուց . « Ինչու կուտաս , Պողոսիկ » . ըսի . — « քանանց մը
կորուսի . մայրս ինծի պիտի ծեծէ » . ըսաւ ու սկսեց նորէն լալ . —
« ու՞ր կորուսի » . — « ձեռքէս ինկաւ ու գլորեցաւ սե տիղմին
մէջ » . — « Ինչո՞ւ տղայ » . ըսի ու ճշմարտապէս գլխացայ իրեն և
իր կորնեցուցած գանձը գտնելու համար սկսայ օշնել : Պողոսիկը
իր թեւով աչքերը սրեց և ուրախացաւ երբոր տեսաւ որ հան-
դերձի թեւերը վեր կը ստիճուի : Զեռքս տիղմին մէջ խօթեցի ,
ամէն մէկ տիւն լեցուն ձեռքս դուրս հանած ատենաւ ուղղորու-
թեամբ կը հայէր . տիղմ , մանր քար , ժանգոտած երկաթի կտոր .
վանք կըհանէի . դուցէ՛ հետեւեալ անվանուի իր կորուսած քան-
նոցը դուրս հանէի . վերջապէս դաս : Ընթերցողը պիտի ուրա-
խանայ ու ըսէ . հիմայ Պողոսիկին արտաւրեւրը կընստ արեւ .
իր երեսը խնդալեւ և իր սիրտը երջանիկ ընել . որ իր մօրը
աղապարածը ամենով կընայ վա խէն տուն երթալ անան իր մօրմէն .
պատժուելու :

Բայց , սիրելի ընթերցող՝ վերջը մտիկ ըրէ . գիտե՞մ որ քեզ
պիտի տղապանեցունէ , և , դուցէ՛ , աչքերդ արտաւրով լեցունէ . բայց
աս օրինակը օտաւար կընայ ըլլալ քու կենացը բոլոր օրերուն
մէջ :

ՊՕՂՈՍԻԿԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Անիկա մէջ բռնանոր տիղմով զգալուս պէս՝ Աստուած մօռցայ որ
իս կը զննէր . Աստուան փորս մաւ , ինչպէս որ գիտես , անգամ
մը Յուդային սիրտը մտաւ , սը ստիճով իր Փրկիչը մտանց : Իմ
պատիւս , բարի գլխադրութիւնս , ճշմարտութիւնս , մէկ խօսքով ,
խղճիս հանդատութիւնը միայն մէկ քան փարանոցի մը ծախեցի :
Բանանոցը գանեթս ետըր թիչ մնալ փնտուցի , և տխուր երեսով
մը Պողոսիկին ըսի . որ չի գտայ , և պարապ բան է փնտուելը :
Ո՛հ , ի՞նչպէս խոշոր արտաւրեւրը աչքերը ուռնցու ին , ու յուսա-
հատական նայուածքով մը ելաւ , գնաց : Իսկ ես յանցաւոր ըլլալս
զգալով ո՛րչափ նուատ սեպեցի իմ գլխիս քանդի Աստուծոյ երեք
պատուիրանքը կտրիւի . նախանձեցայ , որ գողութեան առաջ-
նորդեց , յետոյ տոնցի , որ ամէնը ծածկուի . առաջ , մէկ մեղքը
քանի՞ մեղքերու առաջնորդ կըլլայ : Ետտ տարիներ անցան ,
ստ չար գործին համար Աստուծմէ թողութիւն խնդրեցի . սա-
կայն ընաւ չեմ կընար յիշողութեանս վրայն ան սե մօլըր սըր-
բելու , որ ան տիղմիտ քանի՞ ողով տալուած է :

ԲՈՑ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՄԲԱԿ : Լիւրագու. : Մարտի 26.

Բամբակի չափանի հանդարտ էր, և գրեթէ ան-
փոփոխ մնաց այս չափով : Բամբակ ունեցողներն
ծախել են ուղեր բարձրագոյն գիններու յոսով :

Յունիսին միջ յանձնուելիք Եգիպտոսի տեսակն,
լիւրէն 1 փենի աւելի ծախուեցաւ : Եւրոպայի միջ
ծախուած բամբակի քանակութիւնն էր 20,000
թաւ. իսկ այսօր 5,000 թ. միայն : այսինքն Ամերի-
կայի 300 թ. Փերնամբի 260. Մարանհամբի 400.
Եգիպտոսի 700. Իզմիրի 500 և Հնդկաց 2,800 :
Կտաւեղեններու և մանածաներու գիններն ալ հե-
տեալաբար ըստ մեծի մասին անփոփոխ մնացին,
բէկէրի մի թոյլ :

Բամբակի գիններու տարբերութիւնն

	գին 1864 ամի.	գին 1863 ամի
Մարտի 26	Նոյն ամսին :	
Փենի.	Փենի.	
Ամերիկայի բամբակ	25 / 27 1/2	21 / 32 1/2
Եգիպտոսի	26 / 01	19 / 23
Չիլիական	22 1/2 / 23 1/2	14 1/2 / 17
Սուրբամբի	12 / 23	15 1/2 / 7 1/2
Մարդասի	20 1/2 / 00	15 1/2 / 16
Բանդալայի	14 1/2 / 16	15 1/2 / 16
Հնդկաց	17 1/2 / 18 1/2	10 1/2 / 12

ԿՏԱԽԵՂԵՆ ԶԵՆՈՒԳՈՐԾ ԿԱՄ ՄԱՆԻՖԱՏՈՒՐԱՆ
ՄԱՆԶԵՍՏԵՐ

ՄԱՐԲԱ	գին 1864 ամի.	գին 1863 ամի
Լաւր. 20 կամ 21	3 2/3	2 1/4 1/2
" 21 " 22	4 2/3	2 3/4 1/2
" 22 " 23	5 2/4	0/0
" 24 " 25	5	"
" 28 " 29	6	"
" 29 " 30	4	"
" 31 " 32	7 2/1 1/2	2 2/2 1/2
Մաշտաի	26 " 27 5	2 5/2 1/2
" 28 " 29 6	"	"
" 31 " 32 7	2 5/2	2 5/2 1/2
ԱՄԵՐԻԿԱՆ	26 " 27 2 1/2 3	2 5/2 1/2 36
" 26 " 27 4	2 6	2 6 1/2 1/2
" 36 " 4 5	"	"
" 36 " 6	2 5	0/0
" 38 " 7	"	"
" 39 " 8	2 4	0/0
" 40 " 9	"	"
" 42 " 10	2 1/2	2 2 1/2 1/2

ԲԱՄԲԱՅԻ ԿՏԱԽ	գին 1864 ամի.	գին 1863 ամի
Մատուցում.	31 " 32 5 1/2	15 5/2 0/0 46
" 31 " 32 6	15 4 1/2	0/0
" 32 " 6 1/2	17 6	0/0
Փերնամբ	34 " 9	21 0/0 50
" 36 " 9 1/2	26 6	0/0
" 36 " 10	28 0/0	0/0

ՄԱՏԱՄԱՊՈՒ ԵՐԹԻՆԿ	գին 1864 ամի.	գին 1863 ամի
Յիւ ճերմակ	34 " 6	0/0 0/0 40
" 36 " 7	10 6	23 0/0
Եւրոպայի խամ	39 " 9 1/2	0/0 0/0
" " 6	15 3	0/0
" " 7	0/0	0/0
" " 8 1/2	21 3	21 0/0

ՍԱՎԱՇՊՈՒՐ	գին 1864 ամի.	գին 1863 ամի
" 6/4	5	0/0 0/0 20
" 1/3	2 1/2	6 6 7/0
" 4/1	1 1/2	4 3 4/6

ՍԱՆԱԾ	գին 1864 ամի.	գին 1863 ամի
Յիւ ճերմակ	12 Սրտ 2/1 1/2	2/ 3 1/2
" 20 " 2/4 1/2	"	2/ 5 1/2
" 12 " 1/1	"	1/10 1/2
" 20 " 2/2	"	2/ 3
" 40 " 3/1 1/2	"	3/ 1 1/2

ԲՈՒՐԴ : Լիւրագու. : Մարտի 26.

Անցեալ փորձին մեծ չարժուէն եղաւ մեր հրա-
պարակին վերայ, որ երկար առեւելքի վեր պա-
տահած չէր : Եւ մեծամեծ գործողութիւններ
տեղի ունեցան : Օտար բարդերն չառ ուզուե-
ցան : չառ տեսակներն ալ բոլորովին ծախուեցան :
Թիւրքիոյ և Իլլիրիոյ լաւ տեսակներն կրնաւուին :
Դոնի բարդ ունեցողներն կապահէն բարձր
գիններու ակնկալութեամբ : սակայն քիչ մի
ծախուեցաւ : Իսպանիոյ փենի աւելի անցեալ
չարժու. համեմատութեամբ : Փերնամբի և Ամե-
րիկայի տեսակներն, ամենն ալ բարձր գնով ծախ-
ուեցան : Ինկիլիսի տեսակն չառ ձեռքէ ձեռք անցաւ
և գրեթէ ալ չկայ : գիններն ալ 2 շի. 5 փենիէն
մինչև 2 շի. 10 փենի ըստ տեսակին :

Եգիպտոսի ճերմակն	գին 1864 ամի.	գին 1863 ամի.
" սեն և գորշն	0/10 1/2	1/1 1/2
Ամրակայի վ. խոյնի և Սիլիկայի լաւն	1/ 1 1/2	1/2 1/2
" ստորին	0/10 1/2	1/11 1/2
Սիլիկայի և Սիլիկայի գառան գագաթն	0/10 1/2	1/11 1/2
Էնկիլիսի ճերմակ ֆիլի	12/ 9	2/10 1/2
" ստուի կամ թիթիկ	0/ 0	0/0
Իզմիրի լուստուած Ա. տեսակն	1/ 2	1/3
" ճարպով	0/7 1/2	0/8 1/2
Սիլիկայ ճերմակ լուստուածն	0/11 1/2	1/1 1/2
Պարսից և Բաղդադի ճերմակ Ա.	1/ 4	1/9
" գորշ Բ.	0/11 1/2	1/3 1/2
Թուսից լաւ մերմուս	1/10	2/8
" խառն (մետա)	1/ 8	2/2
Բրուկինի լուստուածն	1/ 2 1/2	1/5
Դոնի գագաթն (թիթիկ)	1/ 0	1/2
" գետնային	0/0	1/2
Չիլիական Ա. տեսակն	1/ 4 1/2	1/6 1/2
" Բ.	1/ 2 1/2	1/4
" Գ.	1/ 1	1/2

ՄԵՏԱՐԱՍ : Լիւրագու. : Մարտի 26.

Մետարսի մեծ տուածաւոր չէղաւ այս չափով.
և գիններն ոչ միայն հաստատ են անցեալ չափ-
թուան ալիս : այլ և բարձրացող երևոյթ ունին :

Բանկայի Ա. տեսակն	գին 1864 ամի.	գին 1863 ամի.
" միջակն	11/ 0	20/ 6
" 11/ 0	20/ 6	
Չիլիական թիւ 1 և 2	18/ 0	23/ 6
" 3 և 4	12/ 0	21/ 0
Յեւրոպի Ա. տեսակն	13/ 0	23/ 6
" միջակ և ստորին	0/ 0	0/ 0
Պարսկաստանի Ա. տեսակն	13/ 0	17/ 0
" միջակ	0/ 0	0/ 0
Թուրքաստանի. Բուրսայի ֆարքիքա	27/ 0	31/ 0
Խաւկալի Ա. տեսակն	22/ 0	27/ 0

ԿՅԵՆՈՒՆ ԵՊԻՍԿՈՒՆ

ՇԱՔԱՐ : Բանկայի կոստիօր	գին 1864 ամի.	գին 1863 ամի.
" Բեռնարկի ճերմակն	44/ 9	48/ 0
" Դասի	46/ 0	48/ 0
" Դասի	43/ 6	45/ 0
" Մաղարսի ճերմակն	48/ 0	53/ 6
" Չիլիական թիւ 1 և 2	43/ 0	49/ 0
" թուրք տեսակն	34/ 0	42/ 6
" Սիլիկայի կոստիօր	39/ 6	39/ 0
" 10 իսպանաց գլուխ	40/ 0	0/ 0
" 6 իսպանաց	41/ 0	0/ 0
" Հոլանդաց 10 — 6 իսպ. գլուխ	0/ 0	4/ 0
" կոստիօր թիւ 1. Էոյ	0/ 0	0/ 0
" թիւ 2.	0/ 0	0/ 0
" 3.	0/ 0	0/ 0
" V O և B H. թիւ 1.	0/ 0	0/ 0

ՍՈՒՐՃ (քաշիլ) Սիլիկայի օմիլիոյն	գին 1864 ամի.	գին 1863 ամի.
" Բիթլիկ և Բաշիկայի	62/ 0	70/ 0
" Յալայի և Բաշիկայի	73/ 0	83/ 0
" Սիլիկայի կոստիօր	77/ 0	82/ 0
" Սիլիկայի կոստիօր	85/ 0	102/ 0

Խանթարն լիւր չիլ փեն լիւր չիլ փեն

ԲՈՒՆՉ Բանկայի	9/ 0	14/ 0
" Մաղարսի	0/ 6	10/ 3
" Փատուային	12/ 6	21/ 0
" Ս. Կոստիօր	8/ 0	10/ 0
ՅՈՐԵՆ Օղեսայի	39/ 0	43/ 0
" Թիւրքիոյ	0	0/ 0
ԳՍՐԻ	18/ 0	27/ 0
ՄՍՐԱՅՈՐԵՆ	0/ 0	0/ 0
ԿՏԱՎԱՏ Սիւ Գոգու	64/ 0	55/ 0
" Բուսայ	47/ 0	57/ 0
ԿՈՃ (Հիւսիս) Յիւսիսի խանթարն	63/ 0	130/ 0
" Արեւելիկն	38/ 0	0/ 0
ՌՕՄ Յալայի	4/ 6	5/ 0
" Սիլիկայի և Հիւսիսային	1/ 7	2/ 8
ՊՂՊԵՂ (Բիթլիկ) Մաղարսի սեն իսպան	4 1/2	4 1/2
" Սիլիկայի սեն	3/ 2	4/ 0
" ճերմակ տեսակն	1/ 6	1/ 1
ԹՅՅ Կոնգու	1/ 8 1/2	2/ 0
" Սուրբու	1/ 0	2/ 8
ՏԱԳԻԼ (բաշար)	2/ 1/2	2/ 1/2
ԱՅԻՕՆ Թուրքաստանի	19/ 6	20/ 0
ԽԵԾ (Համբ) Արաբիոյ և Թուրք. խանթ.	70/ 0	115/ 0
" Արեւելիկն	57/ 0	64/ 0
ԳԻՏՈՐ (մաղար)	150/ 0	155/ 0
" ճերմակ և սիլ տեսակ	100/ 0	0/ 0
ՃԵՂԻ Պարսկաստանի	3	10/ 5
" Իզմիր	0/ 0	0/ 0
ԿԱՂԻՆ ՎԱՅՐԻ (Վալաւուտ) Թոն	14/ 0	17/ 0
ՏՈՐՈՆ (Բեռնարկ) Իզմիրի. խանթ.	48/ 0	57/ 0
" Արաբիոյ, Ասորիի և Կիլիկիոյ	38/ 0	43/ 0
" Բուսայի	26/ 0	33/ 0
ԿԱՆԵՓ Ռուսաց	38/ 10	41/ 10
" Թիւրքիոյ	0/ 0	0/ 0
" Բուսայի	25/ 0	35/ 0
ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ (Բրուկ) ճերմակ. իսպան	3/ 4	4/ 6
" սեն	3/ 4	3/ 8
ԼԵՂԱԿ (Հիւսիս) Բանկայի լաւն	0/ 0	0/ 0
" միջակ և ստորին	5/ 10	7/ 0
" Ուղին	1/ 8	6/ 3
" Մաղարսի ամեն տեսակն	1/ 0	6/ 8
" Գիւրքալին	3/ 0	6/ 5
ՇԻԲ ԴԼՈՒՍ	6/ 2 1/2	6/ 5
ՆԵՄԱԴԻՐ	0/ 0	0/ 0
ԳԵՐԸՄ ԹԱՐԹԱՐ ճերմակն	107/ 0	110/ 0
" Գեղին	100/ 0	105/ 0
" Թուրք	50/ 0	97/ 6
ՄԱԳՆԵՉԻԱ	0/ 0	0/ 0
ՎԱՐԳԻՆԻՂ (Գիւլ Եաղի) Օնցան	16/ 0	25/ 0
ՄԵՂԱՍՏՈՄ Հիւսիսային. Թոն. լիւր. 8	9	
" Ամերիկայի	8 17/ 6	9 2/ 6
ՀԱՐՊ Պետերբուրգի Կ. Շ. խանթ.	41	9/ 0 42
" Սեւ ճովի Եկածն	43	0/ 0 0/ 0
" Հիւսիսային Ամերիկայի	42	0/ 0 0/ 0
ԹՈՒՉ (Ինճեր)	32	0/ 0 68 0/ 0
ՉԱՄԻՉ. Վալայի	28	0/ 0 36 0/ 0
" Իզմիրի կարմիրն	26	0/ 0 32 0/ 0
" Սուրբու Ա.	37	0/ 0 47 0/ 0
ՉԵԹ Կիլիկիոյ 252 Գալուն (Բոն).	60	0/ 0
" Արեւելիկ և Մաղարսի	55	0/ 0 0/ 0
ԹԵՐԵՍԻ	157	0/ 0 0/ 0
ՄԵՏԱՎ. Կ. Կոնիս. սանի տակ	115	0/ 0 0/ 0
" Թիւրք (Հիւսիս)	110	0/ 0 0/ 0
ՉԻԿ	26	10/ 7
ԵՐԿԱԹ Չիւր (Համբ) Ա. տես.	0/ 0	
" Գոգու (Հիւսիս)	11	0/ 0 11 10/ 0
" Թեթիկ	12	12 10/ 0
ԼԱՍԱՐ (Եւրոպայի) Թեթիկ	21	17/ 22 1/ 6
ԱՆԱՎ. (բաշար)	112/	118/
ԹԵՆԵՔԻ. Լ.Շ.	25	27

ՏԵՐԵՆ ԵՐԿԱՐԻՐ Կ. Վ. ՇԱՀՆԱՅԱՐԱՆՆՑ
ՄԱՆԶԵՍՏԵՐ. Ի ՏՊԱՐԱՆԻ ԻՐՈՒՄ

Printed and published by K. Vardapete Shahnazariantz, 151, Rumbold-street, Chorlton-on-Medlock, Manchester.---Monday, March 28, 1864.